ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2024թ. թիվ 870-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 855-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. ապրիլի 30-ի «Մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 647-Ն որոշմամբ սահմանված կարգի 9-րդ կետի պահանջներով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի խորհրդի 2024 թվականի հոկտեմբերի 30-ի նիստի օրակարգի նախագիծը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի հոկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի խորհրդի նիստ հրավիրելու մասին» թիվ 855-Ա որոշման մեջ «Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի «Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի» դահլիճում» բառերը փոխարինել «Լոռի Բերդ համայնքի համայնքապետարանի նիստերի դահլիճում» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 25
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2024թ. հոկտեմբերի 25-ի
թիվ 870-Ա որոշման

Նախագիծ.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30.10.2024թ. գ. Լոռի Բերդ

1. Մարզում սուբվենցիոն ծրագրերով ու պետական միջոցներով իրականացվող ծրագրերի ընթացքի և 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթների ներկայացման մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռուբեն Մարգարյան,

10 րոպե)

2. 2024 թվականի 9 ամիսներին Լոռու մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարման մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մերի Դալլաքյան,

10 րոպե)

3. Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական օժանդակության ծրագրերի մասին.

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյան,

10 րոպե)

4. Առողջապահության ոլորտում իրականացվող աշխատանքների, գրիպի համաճարակի և դրա դեմ պատվաստումների անհրաժեշտության վերաբերյալ

(Զեկուցող՝ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռուզաննա Պողոսյան,

10 րոպե)

5. 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների պատճառով տեղի ունեցած աղետի հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների փոխհատուցման հետ կապված գործընթացի մասին.

(Զեկուցողներ՝ ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյան և ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գոռ Ասրյան,

15 րոպե)

6. Այլ հարցեր:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

25/10/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ